ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ- 183

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «18» «04» 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պետական մարմին)՝ ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Գ. Սաֆարյանի, մի կողմից, «Կամերային երաժշտության ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրենի պարտականությունները կատարող Գ. Սարգսյանի, մյուս կողմից, (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պետական մարմինը հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Պետական մարմնի կողմից հատկացված միջոցներն ուղղել երգեհոնային երաժշտության միջազգային փառատոնի կազմակերպման ծախսերին՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող ծրագրի (Հավելված N 1), ծախսերի նախահաշվի (Հավելված N 2) և կատարողական ցուցանիշների (Հավելված N 3):

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 *Պետական մարմինը պարտավոր է՝*

2.1.1. Ի կատարումն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի ապրիլի 13 -ի N 645-Ա/2 հրամանի՝ հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ֆինանսավորվող մշակութային դրամաշնորհային ծրագրերի «Երաժշտարվեստի նախագծեր» անվանակարգի մասնագիտական խմբի 2022 թվականի մարտի 17-ի նիստի N 5 արձանագրությունը՝ Կատարողին հատկացնել գումարը «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի «1168. Արվեստների ծրագրի» «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված անհատույց դրամաշնորհների հաշվին,

2.1.2. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում ընդունել Կատարողի կողմից Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով սահմանված կարգով ներկայացված հաշվետվությունները, ընդունելուց հետո ստորագրել հանձնման-ընդունման արձանագրությունը:

2.2. *Պետական մարմինն իրավունք ունի՝*

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Կատարողի կողմից Պայմանագրի կատարման ընթացքը՝ չմիջամտելով վերջինիս գործունեությանը,

2.2.2. Կատարողի կողմից Պայմանագրի 2.3-րդ կետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում հետ պահանջել փոխանցված գումարը, միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը,

2.2.3. Կատարողից պահանջել առանց լրացուցիչ վճարի վերստին կատարել ոչ պատշաճ ձևով կամ կարգով կատարված աշխատանքները,

2.2.4. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում Կատարողից պահանջել ներկայացնել Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով նախատեսված հաշվետվությունը:

2.3. Կատարողը պարտավոր է՝

2.3.1. Պայմանագրից բխող աշխատանքներն իրականացնել՝ ապահովելով Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվի, ինչպես նաև Պայմանագրի այլ պարտադիր պահանջները,

2.3.2. Պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն աշխատանքների կատարման ընթացքի մասին,

2.3.3. Մինչև Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված հաշվետվությունների ներկայացման ժամկետի ավարտը Պետական մարմնին ներկայացնել հաշվետվություն (ֆինանսական և բովանդակային) իր կողմից իրականացված ծախսերի (ինչպես նաև համաֆինանսավորման մասով ըստ պահանջի) և կատարված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը պարունակում է Պետական մարմնի կողմից հաստատված ձևանմուշով լրացված ձևը (նախահաշվի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կատարողի մոտ, վերջինս պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար), իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառման իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,,

2.3.4. Պայմանագրից բխող աշխատանքները չկատարելու դեպքում վերադարձնել Պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 5,0 (հինգ) տոկոսի չափով,

2.3.5. Հրապարակել Պետական մարմնի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.3.6. Ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ Պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները վերացնելու նպատակով,

2.3.7. Սույն Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքների կատարման գործընթացը կազմակերպել ***«Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ*** սահմանված կարգով,

2.3.8. Պայմանագրով սահմանված աշխատանքների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան մինչև 2022 թվականի դեկտեմբերի 23-ը:

2.4. *Կատարողն իրավունք ունի՝*

2.4.1. Պետական մարմնի կողմից Պայմանագրի 2.1.1-ին ենթակետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով Պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը,

2.4.2. Անհրաժեշտության դեպքում Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղություններում իրականացնել յուրաքանչյուր ծախսային ուղղության գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների իրականացման համար Պետական մարմինը Կատարողին հատկացնում է 10000,0 հազար (տաս միլիոն) դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 2-ի,

3.2.Պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը Կատարողին հատկացվում է Պայմանագրի կնքումից հետո, իսկ 20 %-ը՝ Պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ Կատարողի հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.3. Համաձայն «ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների

չօգտագործված գումարները 2022 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված աշխատանքները Կատարողի կողմից ներկայացվում են Պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան Պայմանագրով սահմանված ժամկետում: Պետական մարմնի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն:

4.2. Ծրագրով նախատեսված ոչ ֆինանսական ցուցանիշները չեն կարող ներառվել 02.02.2022 թ. դրամաշնորհի տրամադրման N ՄՇԴ-65 պայմանագրով նախատեսված ոչ ֆինանսական ցուցանիշներում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1. Պայմանագրով նախատեսված պարտավորությունները Կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ Պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու համար կողմերից յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում մյուս կողմին պատճառած վնասների լրիվ ծավալով՝օրենքով սահմանված կարգով,

5.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ Պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների լրիվ չափով փոխհատուցում,

5.3. Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը Կատարողի կողմից այն կատարել շարունակելն աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում Պետական մարմինը իրավունք ունի կամ ստանալ Պայմանագրի 3.1-ին կետով նախատեսված գումարի լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել Պայմանագրի հարկադիր կատարումը,

5.4. Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքների համար պայմանագրով սահմանված ժամկետները Կատարողի կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պետական մարմնին վճարում է տույժ՝ հանձնման ենթակա, սակայն չհանձնված աշխատանքների արժեքի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար,

5.5. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար նախատեսված ժամկետները չպահպանելու դեպքում Կատարողը Պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը մինչև 2022 թվականի դեկտեմբերի 1-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը մինչև 2022 թվականի դեկտեմբերի 10-ը:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

7.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը,

ատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8.ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

9.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պարտավորությունների ողջ ծավալով կատարման ավարտը:

10. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

10.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ,

10.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից,

10.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կատարողին տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ,

10.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր,

10.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կատարողից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

11. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

11.1. Պայմանագիրը կազմված է 8 թերթից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ,

11.2. Սույն պայմանագրում լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնությունները կազմվում են գրավոր և հաստատվում են Կողմերի ստորագրությամբ:

12. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Կամերային երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Երևան, Վ. Սարգսյան 3	Երևան, Իսահակյան 1
Կառավարական տուն N 2	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	h/h 900018001736, հվhh 01573197
Հ/Հ 900011032878, հվhh 02698732	հեռ. 010583353
Գլխավոր քարտուղար՝	Տնօրենի պարտականությունները կատարող՝
_____ Գ. Սաֆարյան	_____ Գ. Սարգսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ. Տ.	Կ. Տ.

Հավելված N 1
« 18 » «04» 2022 թ.
N ՄՇԴ-183պայմանագրի

ԾՐԱԳԻՐ

Երգեհոնային երաժշտության միջազգային փառատոնի

1	Կազմակերպության անվանում	«Կամերային երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ
2	Կազմակերպության գտնվելու վայր	Իսահակյան 1, ք. Երեւան, ՀՀ
3	Ծրագրի անվանում	Երգեհոնային երաժշտության միջազգային փառատոն
3.1	Բովանդակություն	Հայաստանի բազմաժանր երաժշտական կյանքում իր ուրույն տեղն ու լսարանն ունի երգեհոնային երաժշտությունը: Դրա վկայությունն են հանրահայտ հայազգի երգեհոնահարներն ու բազմաթիվ երգեհոնների առկայությունը Երևանում և Հայաստանի այլ քաղաքներում՝ Չարենցավան, Կապան, Գյումրի: 2022թ.-ին Կամերային երաժշտության ազգային կենտրոնը նախատեսում է իրականացնել միջազգային երգեհոնային 1-ին փառատոնը, որին կմասնակցեն ինչպես հայաստանյան, այնպես էլ արտերկրի հեղինակավոր երգհոնահարները: Կհնչեն ինչպես դասական երգեհոնային ստեղծագործություններ, այնպես էլ հայկական երաժշտական գոհարների երգեհոնային մշակումներ և հայ հեղինակների երգեհոնային ստեղծագործություններ: Փառատոնի ընթացքում կանցկացվեն վարպետության դասեր արտերկրից ժամանած երգեհոնահաների կողմից: Բարոկ և դասական երաժշտության կողքին կհնչի նաև հայ հոգևոր երաժշտություն:
3.2	Նպատակ	Երգեհոնն ամենահին երաժշտական գործիքներից է և դասական երաժշտությունը անհնար է պատկերացնել առանց դրա: Միանշանակ է նաև, որ Հայաստանում այս երաժշտաոճի պահպանման, պրոպագանդման և զարգացման հրամայականը կա: Այս նպատակների կայացման լավագույն միջոցն ենք համարում երգեհոնային երաժշտության միջազգային փառատոնի նախաձեռնումն ու իրականացումը: Նշենք նաև, որ Կոմիտասի անվան կամերային երաժշտության տան երգեհոնը պատրաստվել և տեղադրվել է 1997թ-ին, հոլանդական «Ֆլենտրոպ» ընկերության կողմից և եզակի է իր տեսակի մեջ նախկին ԽՍՀՄ տարածքում: Կարևորելով հայ երգեհոնային դպրոցի հանրահռչկումը արտերկրում, ծրագրում ենք նաև համագործակցություն նմանօրինակ միջազգային փառատոնների (Սբ. Ալբանս՝ Անգլիա, Կրակով՝ Լեհաստան, Սիցիլա՝ Իտալիա և այլն) և ժանրի արտերկրի լավագույն կատարողների հետ:
3.3	Անցկացման ժամկետ	Մայիս – 01 դեկտեմբեր 2022
3.4	Անցկացման վայր	Կոմիտասի անվ. Կամերային երաժշտության տուն,

		Կապանի երաժշտական ուսումնարան, Չարենցավանի երաժշտական դպրոց
3.5	Ակնկալվող արդյունքներ	Հայաստանն ունեցել է և ունի երգեհոնային արվեստի լավ դպրոց,որի լավագույն ներկայացուցիչը և հայ երգեհոնային դպրոցի հիմնադիրը Վահագն Ստամբոլցյանն էր: Ունենք հրաշալի երգեհոնահարներ արտերկրում և ակնկալում ենք նաև այս երաժիշտների մասնակցությունը երգեհոնային երաժշտության Երևանյան միջազգային փառատոնին: Շփումն ու միևնույն փառատոնի շրջանակներում հանդես գալը կարևոր հանգրվան կդառնա ոչ միայն պրոֆեսիոնալ հարթությունում, այլ նաև միջմշակութային շփման համատեքստում և հայրենիք-սփյուռք կապերի համատեքստում: Փառատոնի ընթացքում նախատեսվում է իրականացնել նաև բարեգործական համերգ, որի հասույթը կտրամադրվի երգեհոնների վերանորոգմանը: Համերգները նկարահանվելու են պրոֆեսիոնալ թիմի կողմից, հեռարձակվելու են տարբեր հեռուստաալիքներով և սոց. ցանցերով: Ակնկալում ենք երգեհոնային արվեստի հանդեպ հետաքրքրության նոր ալիք, լայն արձագանք հասարակության լայն շերտերի շրջանում: Վստահ ենք, որ փառատոնի շարունակականության արդյունքում երգեհոնային արվեստը հետայսու կտեսնենք որակական նոր բովանդակության մեջ:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	Նախատեսվում է իրականացնել 7 համերգ, ակնկալվող հանդիսատեսի քանակ՝ 2000:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032878, հվհհ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Գ. Սաֆարյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
«Կամերային երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Երևան, Իսահակյան 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հ/հ 900018001736, հվհհ 01573197
հեռ. 010583353
Տնօրենի պարտականությունները կատարող
Գ. Սարգսյան
(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված N 2
«18» «04» 2022 թ.
N ՄԾԴ- 123 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

Երգեհոնային երաժշտության միջազգային փառատոնի կազմակերպման ծախսերի (7 համերգ)

Հ/Հ	Ծախսատեսակի անվանումը	Միավոր	Քանակ	Միավորի արժեքը (դրամ)	Գումարը (հազար դրամ)
1	**Վարձատրություն** *(ներառյալ հարկերը)*				**4,050.0**
	Երգեհոնահար	մարդ	10	100,000	1,000.0
	Երգեհոնահար	մարդ	5	250,000	1,250.0
	Դիրիժոր	մարդ	1	200,000	200.0
	Նվագախումբ	մարդ	28	30,000	840.0
	Ծրագրի պրոդյուսեր	մարդ	1	250,000	250.0
	Համակարգող	մարդ	3	120,000	360.0
	Ֆինանսական համակարգող	մարդ	1	150,000	150.0
2	**Գովազդային և տպագրական, հանրահռչակմանն ուղղված ծախսեր**				**1,229.4**
	Տպագրական ծախսեր, որից՝				***200.0***
	Մեծ պաստառներ	հատ	1	36,000	36.0
	Փոքր պաստեր	հատ	2	20,000	40.0
	Ծրագիր	հատ	500	150	75.0
	Հրավիրատոմս	հատ	100	294	29.4
	Ազդագիր (Ա3)	հատ	20	980	19.6
	Գովազդային նյութերի դիզայն	փաթեթ	1	200,000	200.0
	Նկարահանում	համերգ	5	108,000	540.0
	Գովազդային հոլովակ	հատ	1	139,000	139.0
	Հանրահռչակմանն ուղղված ծախսեր, SMM հարթակների առաջխաղացում, գովազդ	ամիս	7	21,480	150.4
3	**Տրանսպորտային ծախսեր**				**2,170.0**
	Ավիատոմսեր (Եվրոպա)	հատ	5	350,000	1,750.0
	Ավտոբուս՝ -Երևան-Չարենցավան-Երևան	օր	1	50,000	50.0
	Ավտոբուս-Երևան-Կապան-Երևան	օր	2	185,000	370.0
4	**Մասնակիցների կեցության ծախսեր**				**884.0**
	Հյուրանոց Երևանում (5 մարդ, 3 օր)	մարդ/օր	15	37,000	555.0
	Հյուրանոց Կապանում (7 մարդ, 2 օր)	մարդ/օր	14	19,000	266.0
	Սնունդ (7 մարդ, 3 օր)	մարդ/օր	21	3,000	63.0
	ԸՆԴԱՄԵՆԸ				**8,333.4**
	ԱԱՀ				**1,666.6**
	ԱՄԲՈՂՋԸ				**10,000.0**

* ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կատարողի կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032878, հվհհ 02698732
Գլխավոր քարտուղար՝
________ Գ. Սաֆարյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Կամերային երաժշտության
ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Երևան, Իսահակյան 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Բ/Հ 900018001736, հվհհ 01573197
հհՀ 01058383
Տնօրենի պարտականությունները կատարող՝
________ Գ. Սևադյան
(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված N 3
«08» «04» 2022 թ.
N ՄՇԴ-183 պայմանագրի

Երգեհոնային երաժշտության միջազգային փառատոնի կատարողական ցուցանիշներ

1. Վաճառված տոմսերի քանակ (բացառությամբ հովանավորչական միջոցներով կազմակերպված միջոցառումների) – 800-1000
2. Պետական ֆինանսավորման տոկոսային հարաբերությունը ֆինանսավորման այլ աղբյուրների համեմատ 100%
3. Նախագծի՝ հանրայնացման ընթացքում լրատվամիջոցների ներգրավվածություն (զուտ տեղեկատվություն և վերլուծական նյութեր, այդ թվում՝ օտարերկրյա ԶԼՄ-ներում) – լրատվամիջոցներում 50 հղման առկայություն
4. SMM (Social Media Marketing) ցուցիչներ – վճարովի գովազդի առկայություն, միջոցառումների առաջխաղացում սոցիալական ցանցերում
   1. Պաշտոնական կայքէջ
   2. ֆեյսբուքյան էջ – 12.000 հետևորդ
   3. Ինստագրամ – 140 հետևորդ

   Կազմակերպության հետ համագործակցող կամավորների քանակ – 10 - 15
5. Ա) Գովազդատեղեկատվական արշավ. հանրային լայն ճանաչում ունեցող մարդկանց ընդգրկվածություն – տեսանյութերի պատրաստում հանրային լայն ճանաչում ունեցող երաժիշտների, դիրիժորների, կոմպոզիտորների մասնակցությամբ

   Բ) Նախագծի հանրային ճանաչելիության բարձրացմանն ուղղված այլ միջոցառումներ – հնարավորության դեպքում՝ արտաքին գովազդի վահանակներ, էկրաններ
6. Հրավիրյալ ստեղծագործողների (հայ և օտարազգի) քանակ - 15
7. Ինքնազբաղ/անկախ ստեղծագործողների ներգրավվածություն – 15

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և
սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032878, հվhh 02698732
Գլխավոր քարտուղար՝
---------- Գ. Սաֆարյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
«Կամերային երաժշտության
ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Երևան, Իսահակյան 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
h/h 900018001736, հվhh 01573197
հեռ. 010583353
Տնօրենի պարտակատարությունները
կատարող՝
---------- Գ. Սարգսյան
(ստորագրություն)
Կ. Տ.